ԱՌԵՂԾՎԱ՞Ծ. Ո՛Չ, ՋԱՎԹՎԱԾ ՀՈՂԵՐ

Վերջերս «Խորհրդային Հայաստանում» հրապարակված «Մեհրիի հանապարհի առեղծվածը» կամ՝ ով էր կտրում Հայաստանի զարկերակը» հոդվածը փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտում էր Հայաստանի հանդեպ վերջին տասնամյակում տարվող նենգ քաղաքականության նորանոր դրվագները։ Այլ հարցերի հետ նշվում էր նաև, որ 1986 թ. հանրապետության սահմանները ճշգրտվեցին և հետ վերադարձվեցին 14 հազար 530 հեկտար այն հողահանդակները, որոնք զանազան խարդախ միջոցներով զավթել էր Ադրբեջանը։ Իհարկե, դրանք անպետք հողեր չէին, եթե հողն, այն էլ հայոց հողը, կարող է անպետք լինել։ Դրանք այգիներ էին, արոտավայրեր ու անտառներ։ Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե 14 հազար 530 հեկտարը (145,3 քառ. կմ) ինչ է նշանակում ներկայիս Հայաստանի համար, ասենք, որ 1978 թ. տվյալներով Մեղրու շրջանն ընդամենը 663 հա պտղատու և խաղողի այգիներ ուներ, իսկ Գորիսի շրջանն՝ ընդամենը 760 հա։ Այսինքն զավթվել էր շուրջ տասն անգամ ավելի շատ, քան Գորիսի և Մեղրու շրջանների այգիները միասին վերցրած։ Եվ այսքանից հետո Ադրբեջանն ու նրա հովանավորներն աղմկում են «տարածքային պահանջների», «տարածքային փոփոխությունների» ու «սահմանային վերաձևումների» մասին։ Նրանք այնքան հաճախ են կրկնում այս բառակապակցությունները, որ ակամա սկսում ես ուշադրություն դարձնել այդ «տարածքային» կոչվածի վրա և ամեն անգամ Հայկական ԽՍՀ քարտեզներին նայելիս նորանոր մանրամասներ ես հայտնաբերում։ Իհարկե, վերը նշված 14,5 հազար հեկտարի զավթումը քարտեզների վրա չի արտացոլվել, քանի այն, ինչպես հոդվածի հեղինակն է գրում, «ուղղակի վաճառվել էր ադրբեջանցիներին՝ տնտեսության ղեկավար-հողաշինարար-գյուղվարչության պետ-շրջխորհրդի նախագահ-կուսշրջկոմի քարտուղար շղթայի որևէ օղակով, իսկ մեծ մասն էլ աստիճանաբար զավթվել էր խաբեբայության, ահաբեկման, բայց ավելի հաճախ քծնանքի ու կեղծավորության մուսուլմանական ձեռնածությամբ»։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ տարբեր տարիներին հրատարակված Հայաստանի քարտեզներն իրարից սար ու ձորի տարբերություն ունեն։ Այս միտքը կարելի է նաև բառացի հասկանալ, որովհետև հանրապետության քարտեզներից, ասես կախարդական փայտիկի օգնությամբ անհետացել են և՛ սարեր, և՛ ձորեր։ Ահա, իմ առջև է Հայկական Խորհրդային Հանրապետության 1927 թ. մեծադիր քարտեզը (հրատ.՝ Հայկենտվիճվարչության, խմբ.՝ Զ. Կորկոտյան, գծագրող՝ Ա. Մինասյան). ուշադիր դիտողը կնկատի, որ այս և բոլորիս ծանոթ ՀԽՍՀ ներկայիս քարտեզների միջև կան ոչ միայն սար ու ձորի, այլև լճերի տարբերություններ։ Օրինակ, Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաների հատման վայրից արևմուտք գտնվող Մեծ Ալալիճն ու Փոքր Ալալիճը ըստ 1927 թվականի քարտեզի ՀԽՍՀ կազմում են (այդպես է նաև Խորհրդային առաջին մեծ հանրագիտարանի առաջին և երրորդ հատորներում զետեղված քարտեզներում, Մոսկվա, 1926 թ.), իսկ այժմ, իրենց ընդարձակ շրջակայքով հանդերձ ներառված են Ադրբեջանական ԽՍՀ Քելբաջարի (Քարավաճառի) շրջանի մեջ։ Այդ է պատճառը, որ այդ հատվածում՝ Վարդենիսի և Ազիզբեկովի շրջանների բաժանարարում երկու հանրապետությունների միջև տեղի է ունեցել սահմանային հսկայական փոփոխություն։ Ե՞րբ, ո՞ր քվականին, ինչ պայմաններում, իրավական ինչ հիմունքներով է վերաձևվել Հայաստանի պետական սահմանը։

Այս մութ պատմության վրա որոշ լույս են սփռում Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության Հայաստանի պետական կենտրոնական արխիվում պահվող որոշ նյութեր, որոնցից պարզվում է, որ հօգուտ Ադրբեջանի՝ Հայաստանի սահմանների «ճշտումը» եղել է մանրամասն մշակված քաղաքականություն։ Այսպես, Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանային փոփոխություններին նվիրված նիստի արձանագրությունից իմանում ենք, որ այդ օրը լսվել է «Ալլագյոլլար» անվանվող ամառային արոտավայրի մոտավորապես 12,000 դեսյատին տեղամասը ՀԽՍՀ Դարալագյազի կամ Ադր. ԽՍՀ Քուրդիստանի գավառներին վերագրելու մասին» հարցը։ Ի տարբերություն այս փաստաթղթի մյուս կետերի, որոնցում փորձ է արվում սահմանային փոփոխություններն ինչ-որ կերպ պատճառաբանել, այս դեպքում Հայաստանից մի հսկայական հատված՝ 12,000 դեսյատին կամ ավելի քան 130 քառ. կմ պոկելու մասին ընդամենն ասված է, որ «վիճելի տարածքը» հանձնվում է Ուրդիստան գավառին (Ֆ. 112, գ. 1, Գ. 267, քք. 78—81)։ Բայց սա միակ դեպքը չէ. նման զավթումներ կատարվել են դրանից և՛ առաջ, և՛ հետո։

Ինչպես հայտնի է, ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագրով Հայաստանից Թուրքիային է անցնում Կարսի մարզը (18 646 քառ. կմ), Սուրմալուի գավառը (3650 քառ. կմ), Ադրբեջանին՝ Գողթն—Նախիջևանը (5,5 հազ. քառ. կմ)։ Նույն քվականի հուլիսի 5-ի կավբյուրոյի որոշմամբ Ադրբեջանին ընծայվեց նաև ողջ Արցախը (այդ թվում Լեռնային Ղարաբաղի ԻՄ-ը՝ 4,4 հազար քառ. կմ)։

Հայաստանի հողոտման արյունռուշտ կերտխումից հետո կարելի էր նատել նոր բանակցություններ սեղանի շուրջ, և արդեն դանակ-պատառաքաղով մասնատել Հայաստանի մնացյալ մասը։ Ռուս-Թուրքական չարաբաստիկ պայմանագրից ուղիղ մեկ տարի անց՝ 1922 թ. մայիսի 29-ին, Միութենական խորհրդի Նախագահության նիստում քննարկվում է Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային վեճերի հարցը։ Ճիշտ որ՝ ախորժակը ուռելուց է բացվում։ Սահմանամերձ գոտու հայկական հողերի ու անտառների, մարգագետինների ու լճերի «հարցը լուծելուց» հետո, Ադրբեջանը ձեռքը երկարում է արդեն երկրի ներսը և պահանջում, որ... այն գյուղերին, որոնց հողերը կարող են որպես արոտավայրեր ծառայել քոչվորներին, արգելվի այդ հողերը վարել-ցանելն ու մշակելը։ Եվ ի՞նչ։ Վերոհիշյալ նիստում որոշվում է «դադարեցնել վարել նախկին արոտավայրային հողերը» և ի պաշտպանություն քոչվորների, ռուս կոմիսարի գլխավորությամբ ստեղծել զինյալ ջոկատներ (Ֆ. 112, ց. 1, գ. 25, քք. 39—40, 46—48)։ Թե ինչ կարևորություն էր տրվում Հայաստանը խաշնարածների տնօրինությանը հանձնելը, վկայում է Անդրերկրկոմի՝ սահմանային տարաձայնությունները քննող հանձնաժողովի նույն տարվա նոյեմբերի 6-ի նիստի որոշումը, որով մի քանի գյուղերի տարածքներ Ադրբեջանին ընծայելուց հետո վճռվում է, որ Հայաստանում այս կամ այն հողատորները կարող են մշակել միայն այն դեպքում, եթե այդ վնաս չի պատճառի քոչվորներին (Ֆ. 112, ց. 1, գ. 35, թ. 20)։

Այս քաղաքականության արդյունքը եղավ այն, որ Հայաստանի արոտավայրերի կեսից ավելին հանձնվեց Ադրբեջանում (170 հազ. դեսյատին) և Վրաստանում բնակվող (24 հազ. դեսյատին) ադրբեջանցիներին։ Իսկ գուցե Հայաստանն այնքան ավելորդ հողեր ուներ, որ կարող էր առատորեն աջ ու ձախ բաշխել։ Անշուշտ՝ ոչ։ Օրինակ, ոչ լրիվ տվյալներով, 1924 թ. միայն գաղթականներից 79.634-ը հողազուրկ էր, իսկ տեղացիներից՝ շուրջ 40 հազար մարդ (1926 թ. տվյալներով)։ Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանում մեկ շնչին ընկնող հողաբաժինը 0,9 դեսյատին էր, իսկ Ադրբեջանում՝ 2—3։ Բայց այս 0,9-ն էլ շատերին չհասավ։ Այս էր պատճառներից մեկը, որ ՀԽՍՀ կենտվիճվարչության տվյալներով 1925 թ. այլ հանրապետություններ արտագնա աշխատանքի էր գնացել 23.682 մարդ։ Իսկ Հյուսիսային Կովկաս և այլ բարեբեր շրջաններ մշտական բնակության մեկնողների քիվը տասնյակ հազարների էր հասնում։

Այն, որ Հայաստանի սահմանամերձ տարածքների զավթումը տեղի է ունեցել այլասյան միջոցներով, վկայում են բազմաթիվ փաստաթղթեր։ Այսպես, 1923 թ. դեկտեմբերին Զանգեզուրի գավգործկոմի նախագահը ներքին գործոց ժողկոմին ուղղած նամակում պատմում է Գորիսի մերձակա Շուրնուխ գյուղի անտառի զավթման մասին. «Վերջերս վերացնելով Ղուրաքլոփ գավգործկոմը և կազմելով Քյուրդստանի գործկոմ (նրանք) սկսել են կրկին արգելել մեր կողմից նշանակված անտառապահներին հսկելու անտառում զանազան ավազակաբարո պաշտոնյաների, վախեցնելով անտառապահներին։ Անգամ թույլ էին տվել ձերբակալելու մեր երկու անտառապահներին, առանց մեզ հայտնելու։ Այդ տգեղ երևույթը կատարվել է Ղուրաքլուի գործկոմի ինչ-որ պաշտոնյայի կողմից երեսունից ավելի զինված բանդիտների միջոցով։

Վերջերս այդ հարցին ավելի սուր բնույթ է տրվել Քյուրդստանի գործկոմի կողմից և «նստաոն սկսել են անխնա կտրել» (Ֆ. 112, ց. 1, գ. 62, քք. 134—135)։ Ծավալիորեն ծանոթ պատկեր, որն անփոփոխ սցենարով կրկնվում է արդեն 70 տարի։

Անդրկենտգործկոմի՝ Զանգեզուրի և Քուրդիստանի գավառների վիճելի հարցերի լուծման հանձնախմբին ուղղված մեկ ուրիշ փաստաթղթից իմանում ենք, որ Գորիսի սակավ անտառներին աչք տնկողներն իրենց պահանջները «հիմնավորում» են նրանով, որ անտառն իրենց պետք է որպես... շինանյութ, այն դեպքում, երբ «հենց Քուրդիստանում կան մի քանի տասնյակ հազար դեսյատին հրաշալի անտառային զանգվածներ, որոնք լիովին կբավարարեն ոչ միայն Քուրդիստանին, այլև Ադրբեջանի բոլոր գավառներին» (Ֆ. 112, ց. 1, գ. 62, թ. 129—130)։

Այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ նույնիսկ զանազան երկրաչափները կարող էին իրենց կամոք տնօրինել հայոց հողը։ 1929 թ. օգոստոսին Հայկենտգործկոմին հղած գրությամբ հողժողկոմի տեղակալ Վ. Մամիկոնյանն ու հողվարչության պետի տեղակալ Խ. Ավդալբեկյանը հայտնում են, որ «Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի երկրաչափ Ջերսկին... Արազդայան գյուղից կտրել և Նախիջևանի հանրապետության սահմաններին է կցել Արազդայանում հաստատված գաղթականների փաստացի օգտագործման տակ գտնված հողերից 12 հեկտար տարածություն։

... Երկրաչափ Ջերսկու սահմանագծումից հետո հողային միանգամայն անտանելի դրություն է ըստեղծվել Արազդայանում հաստատված չափազանց սակավահող նոր բնակչության համար։

... Եղորում ենք Անդրկենտգործկոմի միջոցով Արազդայանի շրջանում վերականգնել տալ այն սահմանը, որ տեղում ընդունված է եղել ընկ. ընկ. Հ. Սուլթանովի և Ա. Երզնկյանի կողմից» (Ֆ. 112, ց. 2, գ. 199, թ. 17)։

Այս ամենն արվում էր ոչ միայն մեր հարևանների՝ հափշտակելու բնազդական պահանջից, այլև քաղաքական ու ռազմավարական հեռահար նպատակներով։ Այլապես ինչո՞վ բացատրել, որ Ադրբեջանը ցանկանում էր տնօրինել նաև Գորիս—Ղափան ճանապարհը, որը նրա հետ ոչ մի կապ չուներ։ Նույն փաստաթղթից պարզվում է նաև, որ «Ղուրաքլուի և մյուս շրջանների բնակչությունը անցյալ տարի որոշել էր միանալ Զանգեզուրի գավառին, որի մասին էլ հեռագրեր էին հղվել Ադրբեջանի Կենտկոմ և Ադրբեջանի Կենտգործկոմ» (Ֆ. 112, ց. 1, գ. 62, քք. 129—130)։

Բայց վերաձևումները սրանով ոչ թե ավարտվում, այլ միայն նոր էին սկսվում։ 1924 թ. հուլիսի 11-ին Ա. Երզնկյանի և Մ. Բաղիրովի միջև կայացած համաձայնությամբ որոշվում է վերջնականապես «ճշգրտել» Հայաստանի սահմանները և ստեղծվում է Զանգեզուրի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողով՝ Անդրկենտգործկոմի լիազոր Յու. Կոշեմկովի, Ադրբեջանի Կենտգործկոմի ներկայացուցիչ, ոչ անհայտ Ասադ Կարաևի և Հայաստանի հողժողկոմատի ներկայացուցիչ Ակսել Բակունցի մասնակցությամբ։ Հանձնաժողովը 1925-ին շրջում է սահմանային գոտում և հողային վեճերի մասին հավաքում բողոքագրեր ու փաստաթղթեր։ Այնուհետև, 1926 թ. սեպտեմբերի 11-ից վերսկսում է աշխատանքը։ Ակսել Բակունցը, որը մինչև հոկտեմբերի 10-ը մասնակցել է սահմանագծմանը, հողվարչությանն ուղղված զեկուցագրում քվարկում է այն գյուղերն ու վայրերը, որոնք անցել են Ադրբեջանին։ Զեկուցագիրն ինքնին մեծ հետաքրքրություն է ներկայացնում, բայց բավարարվենք միայն մի քանի հատվածով. «Առայժմ ձեռքի տակ լուսանելով քվական տեղեկություններ եղած վիճելի տարածության մասին, ինչպես և այն մասին, թե այս վիճելի տեղերից քանի դեսյատինն է անցել այս կամ այն կողմը նոր սահմանագծումից հետո, այժմ միայն մի ընդհանուր եզրակացություն կարելի է հայտնել, այն է, որ զիջող եղել է մեծ մասամբ Զանգեզուրը։ ... Հիմնական քերուքյոնն այդ աշխատանքի այն էր, որ հողհանձնաժողովը սահմանները անցկացնելիս ի նկատի չէր առնում ոչ երկու կողմի հողերի քանակը, թե այս կամ այն գյուղը ինչքան հող ունի, ինչ կապեր ունի հարևան շրջանների կենտրոններին հետ, տնտեսապես ավելի շատ դեպի որ շրջանին է ձգտում և այլն։

... Սահմանն անցկացնելիս մի ուրիշ արգելք էլ կար։ Քյուրդիստանի գյուղերի մասին ճշգրիտ տեղեկություն չկար, հայտնի չէր ոչ նրանց բնակչության քիվը, և ոչ էլ հողերի քանակը։ Բացի այդ, սահմանն անցկացնելիս հիմք չընդունվեց երկու կողմի գյուղերի հողերի նորման. արդյունքը եղավ այն, որ Զանգեզուրին անցնող գյուղերը մնացին հողի նվազ նորմայով։

Մի ուրիշ հանգամանք։ Սահմանին կից Քուրքական գյուղերն ունեն գյուղակներ՝ կազմված 5—8 տնից։ Այդ գյուղակները խանգարում էին սահմանագծման աշխատանքին։ Ճանկանալով միանալ Քյուրդիստանին, այդ գյուղակները պահանջում էին սահմանագիծը գյուղից որոշ հեռավորության վրա դնել, այդ դեպքում վիճելի հողերի մեծ մասն անցնում էր նրանց կողմը» (Ֆ. 123, ց. 1, գ. 1321, քք. 6—7)։

Բայց կրկին վերադառնանք Հայաստանի 1927 թ. քարտեզին, ըստ որի ՀԽՍՀ ներկայիս Կարմիրի շրջանի Արծվաշեն (Բաշքենդ) գյուղը ոչ թե կղզիացած է, այլև քիրակղզու նման միացած է նրան։ Այն Հայաստանին է միացած նաև Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի՝ Անդրկովկասյան հանրապետությունների սահմանային փոփոխություններին վերաբերող որոշմամբ։ Ըստ այդ փաստաթղթի առաջին կետի Ղազախի և Դիլիջանի (որի մեջ էին մտնում ներկայիս Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի և Կարմիրի շրջանները) գավառների միջև սահմանները «ճշգրտվում» են հետևյալ կերպ՝ Շնևիխ-Ալրում կոչվող ողջ տարածքը (11 հազար 659 դեսյատին) հանձնվում է Ղազախին։ Այս փոփոխությունից հետո հայկական Արծվաշեն (Բաշքենդ) գյուղը կտրվում է Հայաստանից։ Կրկին ծագում է ճակատագրական հարցը. ինչպե՞ս անել, որ «և՛ գյուղերը կուշտ լինեն, և՛ ոչխարները ողջ»։ Եվ գտնվում է հերթական «փոխզիջումներին» ուղին։ Որոշվում է «հաշվի առնելով այն, որ հայկական Բաշքենդ գյուղը նրան հատկացված հողերի հետ միասին հանդիսանում է Հայկական ԽՍՀ-ի բաղկացուցիչ մասը և վերոհիշյալ սահմանափոխումների հետևանքով կանցնի Ադր. ԽՍՀ Ղազախի գավառի տարածք, վերջինիս անցնող Շնևիխ-Ալրումի շրջանի հարավային մասից Բաշքենդ գյուղին հատկացնել հողի շերտ (ամառային արոտավայրեր), որը տարածքորեն կկապեր այդ գյուղը Հայկական ԽՍՀ Դիլիջանի գավառին»։ Թե երբ զավթվեց Արծվաշենը Հայաստանին կապող տարածքը, ինձ անհայտ է. համենայնդեպս 1934 թ. քարտեզներում այն դեռևս միացած էր Հայաստանին, իսկ Խորհրդային մեծ հանրագիտարանի առաջին հատորում (Մոսկվա, 1949) հրատարակված Ադրբեջանական ԽՍՀ և երրորդ հատորում (1950) զետեղված Հայկական ԽՍՀ քարտեզների վրա այն արդեն կղզիացած է։ Ուրեմն հանրապետության այս նոր բզկտումը տեղի է ունեցել 1934—49 քք. ընթացքում։

Այդ քվերին Հայաստանի քարտեզներին հայտնվել են նաև ևրենք խոռոչներ։ Ամեն անգամ տարակուսանքով եմ նայում Հայաստանի քարտեզի այն օղակված տարածքներին, որոնք գտնվելով Հայկական ԽՍՀ-ում, սահմանազատված են և սլաքով նշված, որ պատկանում են Ադր. ԽՍՀ-ին։ Դրանցից մեկը Արարատի շրջանում է և ենթարկվում է Նախիջևանի ԻԽՍՀ-ին, երկրորդը՝ Իջևանի շրջանում, երրորդը՝ Իջևանի և Նոյեմբերյանի շրջանների սահմանագլխին։ Որքան էլ ճգնենք, միևնույն է, չենք կարող բացահայտել այն սկզբունքը, որով առաջնորդվել են այս նոր վերաձևման հեղինակները։ Եթե նույնիսկ մտածենք, որ ելակետը եղել է բնակիչների ազգային պատկանելությունը, ապա Ադր. ԽՍՀ և Նախիջևանի ԻԽՍՀ սահմանամերձ գոտու բազմաթիվ հայկական հազարամյա գյուղերը նման մոտեցման դեպքում պետք է տասնյակ օղակների մեջ առնվելով միանային Հայաստանին։ Այնպես որ, ստալինյան բռնատիրական քաղաքականությունը շարունակ սպիտակ բծեր է քողել Հայաստանի քարտեզի վրա։

Թե ինչ քաղաքական ծրագրեր են հետապնդել Հայաստանը բզկտողները, այժմ դյուրին է գուշակել։ Այն առավել որոշակիացավ հանրապետության բլոկադայի այս օրերին, երբ Իջևանի շրջանում գտնվող, բայց չգիտես ինչու Ադրբեջանին ենթարկվող Բարխուդարլու կայարանն իր տերերի անբարոյական քաղաքականությանը հավատարիմ փակել էր Հայաստանին ուղարկվող բեռների ճանապարհը։

Լրագրային հոդվածի սահմաններում, հասկանալի է, անհնար է անդրադառնալ Հայաստանից զավթված բոլոր հողակտորներին։ Վերջում նշենք մի կարևոր հանգամանք ևս։ Եթե 1927 թ. հանրապետության տարածքը եղել է 30 հազար 247,6 քառ. կմ, ապա այժմ այն 29 հազար 742,5 քառ. կմ է։ Բնական չէ՞ ենթադրել, որ այդ 505,1 քառ. կմ կորուստը պետք է փնտրել հենց հանրապետության սահմանների հիշյալ վերաձևումների մեջ։ Համեմատության համար նշենք, որ ՀԽՍՀ Մասիսի շրջանն ընդամենը 169 քառ. կմ է, Նաիրիի շրջանը՝ 303, Էջմիածնինը՝ 377, Սևանինը՝ 389 քառ. կմ։ Ասենք նաև, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն 1926 թ. եղել է 85 363 քառ. կմ, 1949-ին՝ 85,700 քառ. կմ, իսկ 1970-ին՝ 86,600 քառ. կմ (Խորհրդային մեծ հանրագիտարան, հ. 1)։ Նույն տեղում (էջ 247) նշված է նաև, որ Կասպից ծովի մակարդակի անկման շնորհիվ Ադրբեջանական ԽՍՀ-ն մեծացել է 3,5 հազ. քառ. կմ-ով։ Փորձենք քվաբանական պարզ գործողությամբ գլուխ հանել քվերի այս խառնաշփոթից։ Անցյալ էր կրկին հարց է ծագում, իսկ ինչ եղավ ՀԽՍՀ 505,1 քառ. կմ, եթե հայտնի է, որ Հայաստանը ծովափնյա երկիր չէ և ծովի մակարդակի բարձրացման հետևանքով 505,1 քառ. կմ տարածքը չէր կարող ջրատակ լինել։ Մի բան պարզ է, որ օրը ցերեկով Հայկական ԽՍՀ-ն խորհրդավոր կերպով փոքրացել է, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ մեծացել։

Ահա այսպիսի գլուխկոտրուկների առջև ես կանգնում, երբ մեր ընդդիմախոսների «տարածքային պահանջների», «տարածքային փոփոխությունների» և «սահմանների վերաձևումների» մասին անվերջ շաղակրատանքներից դրդված բաղդատում ես Հայաստանի տարբեր տարիների քարտեզները։

Սերգեյ ՎԱՐԴԱՆՅԱՆ